ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

12.07.2019 թ-ին Դիմիտրովի համայնքի վարչական շենքում տեղի ունեցավ հանրային լսում, որը նախագահում էր համայնքի ղեկավար Արման Իոնանովը, քարտուղար՝ Թագուհի Արշակյան:

Մասնակցում էին ավագանու անդամները, գյուղապետարանը աշխատակազմը, մանկապարտեզի և դպրոցի տնօրենները, համայնքի թվով 5 բնակիչներ:

Լսեցին- Դիմիտրով համայնքի ղեկավար Արման Իոնանովի հաշվետվությունը 2019 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքի վերաբերյալ:

Արձանագրվեց, որ 2019 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատակազմի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Համայնքապետարանը կազմակերպություններից և բնակչությունից ստացել է թվով 274 գրություն և դիմումներ, որոնց տրվել է համապատասխան ընթացք:
- Անցկացվել է ավագանու 8 նիստ , կայացվել է 24 որոշում, համայնքի ղեկավարի կողմից կայացվել է թվով 57 որոշումներ, տրվել է 12 կարգադրություններ, որոնք ի կատար են ածվել:
- 2019 թվականի փետրվար ամսից սկսած՝ մրցույթով հաղթող ճանաչված կազմակերպությունը՝ ,,Միլիտոսյան,, ՍՊԸ, իրականացնում է աղբահանութուն համայնքի վարչական տարածքում:
- Ներկայացվել են Դիմիտրով համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման հայտեր, որոնք հավանության են արժանացել: Ընթացքի մեջ է Դիմիտրով համայնքի Վորոշիլովի, Մ. Մաշտոցի, Մայակովսկու փողոցների ասֆալտապատման և համայնքի մանկապարտեզի վերանորոգման աշխատանքները /կնքվել են աշխատանքների իրականացման պայմանագրեր/:
- Կազմակերպվել են միջոցառումներ նվիրված ցեղասպանության զոհերի հիշատակին, Հաղթանակի օրվան՝ մայիսի 9-ին, Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան՝ հունիսի 1-ին:
- Համայնքը տոնական պայմաններում, համայնքապետարանի ակտիվ մասնակցությամբ, մեծ շուքով նշեց ասորական <<ՄԱՐԵՋ>> տոնը՝ հունիսի 13-14-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԸՍՏ ՀԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԵԼ ԵՆ.

1. Հողի հարկ՝ 884 382 դրամ,
2. Գույքահարկ՝1 199 921դրամ,
3.Տեղական տուրքեր՝175000դրամ

4. Տեղական վճարներ՝ 221444 դրամ, որից՝ այլ գույքի վարձակալությունից մուտք 92000 դրամ,

5. Դոտացիա ՝11 230 300դրամ,

6. Շենքերի օրինականացման համար՝ 400 004 դրամ:

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է ֆինանսական աջակցություն ՝340000 դրամ:

Համայնքի մանկապարտեզին հատկացվել է 1675461 դրամ/ տնօրենի և պահակի աշխատավարձ /:

Աղբահանություն իրականացնող կազմակերպությանը տրվել է ՝9000000 դրամ, ծառայության համար:

Ընթացքի մեջ է համայնքի դպրոց և մանկապարտեզ տանող փողոցների ասֆալտապատման և մանկապարտեզի վերանորոգման աշխատանքները:

Համայնքի խնդիրները.

1. Մանկապարտեզի տարածքի բարեկարգում:

2.Ոռոգման ներքին ցանցի վերակառուցում:

3. Նոր բնակեցված փողոցների գազաֆիկացում, էլեկտրամատակարարում, խմելու ջրագծի անցկացում:

4. Կանգառների կառուցում, բարեկարգում:

5. Փողոցների գիշերային լուսավորության անցկացում:

6. Համայնքի կենտրոնական մասի բարեկարգում:

Համայնքի ղեկավար՝ Ա. Իոնանով